

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Կոտայքի մարզի <<Աբովյանի ծննդատուն>> պետական փակ բաժնետիրական ընկերությունը հայտարարում է բաց մրցույթ հետևյալ թափուր պաշտոնների համար:

- անեսթեզիոլոգ-ռենիմատոլոգ - 4 հաստիք

ՀՀ Կառավարության 2011 թվականի հունիսի 10-ի թիվ 22 արձանագրային որոշման պահանջներով բաց մրցույթի մասնակիցը կարող է լինել ցանկացած անձ, ով կբավարարի ստորև նշված պայմաններին՝

1. Անեսթեզիոլոգ-ռենիմատոլոգի համար՝ բարձրագույն բժշկական և հետբուհական կրթության առկայություն համապատասխան մասնագիտությամբ.
2. Վերջին հինգ տարվա ընթացքում համապատասխան մասնագիտական կատարելագործման առկայություն, եթե մասնագիտացումն ավարտելուց անցել է առավել քան 5 տարի.
3. Բժշկական էթիկայի կանոնների իմացություն:

Մրցույթին կարող է մասնակցել գրական հայերենին տիրապետող ՀՀ քաղաքացի, ինչպես նաև օտարերկրյա քաղաքացի, ով ունի կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթ, աշխատանքի թույլտվություն և ում կրթական փաստաթղթերը սահմանված կարգով ճանաչվել են Հայաստանի Հանրապետության կողմից:

ԹԱՓՈՒՐ ՏԵՂԻ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՒՄ Է

1. դիմում (լրացվում է տեղում)
2. մեկ լուսանկար 3 X 4 չափի
3. քաղվածք աշխատանքային գրքույկից (աշխատանքային ստաժ ունենալու դեպքում)
4. ինքնակենսագրություն
5. անձնագրի, բարձրագույն բժշկական և հետբուհական կրթության դիպլոմի , վերապատրաստման վկայականի պատճենները և բնօրինակը
6. արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր գորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճեն
7. նախորդ աշխատավայրից բնութագիր (եթե այդպիսին առկա է)
8. Օտարերկրյա քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետության կացության կարգավիճակը հավաստող փաստաթուղթ և աշխատանքի թույլտվություն:

Անհրաժեշտ փաստաթղթերը հանձնելուց հետո մրցույթի մասնակիցը կձանոթանա այն իրավական ակտերի ցանկին, որոնցից բաղկացած է լինելու հարցատոմսը:

Փաստաթղթերն ընդունվում են <<Աբովյանի ծննդատուն>> պետական փակ բաժնետիրական ընկերությունում ամեն օր 10:00-17:00, բացի շաբաթ և կիրակի օրերից (ՀՀ Կոտայքի մարզ, քաղաք Աբովյան, Հատիսի 22, հեռ. 022237262, 022235787):

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է 15 մայիսի 2017թ. :

Մրցույթը տեղի կունենա <<Աբովյանի ծննդատուն>> ՊՓԲԸ-ում 16.05.2017թ. ժամը 10:30-ին:

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող են դիմել <<Աբովյանի ծննդատուն>> ՊՓԲԸ-ի աշխատանքային խմբին:

Միաժամանակ տեղեկացվում է, որ մրցույթին մասնակցելու համար քաղաքացիների ներկայացրած փաստաթղթերը հետ չեն վերադարձվում: